

## ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆՈՒՅՆԱՑՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔ\*

### Ռոզալյա Հարությունյան

**Բանալի բառեր՝** իդենտիֆիկացիա, սոցիալականացում, ՁՏՄ-ներ, անհատակա-նացում, հոգեբանական մորատորիում, մշակութային փոխանցում:

Իդենտիֆիկացիան լատիներեն *identificare* – բացահայտել, *identicus* – նույնացած բառից է, որի դրսևորման համար անհրաժեշտ է օբյեկտի և սուբյեկտի առկայությունը, ինչը հաստատում է առարկաների նույնական կապը: Ամենա դժվար հարցերից է ինքնանույնացումը՝ սուբյեկտի իդենտիֆիկացիան, քանի որ սուբյեկտը կարող է տիրապետել նույնացման հմտությանը և կարող է այն միայն պատկերացնել և երևակայել: Կարելի է առանձնացնել սուբյեկտի սեփական իդենտիֆիկացիայի գիտակցման և իրականացման մի քանի փուլեր, որոնցով ոչ միայն տեղի է ունենում իդենտիֆիկացիայի՝ որպես պաշտպանական մեխանիզմի հոգեբանական գործընթացը, այլև անձի հոգեկան զարգացման կարևորագույն գործընթացներից մեկը՝ սոցիալականացումը: Ընդունված է այն տեսակետը, համաձայն որի՝ իդենտիֆիկացիայի գիտակցումն ընթանում է անձի ինքնորոշման, ինքնորոշման իրականացման և ինքնահաղթահարման հոգեբանական ներքին գործընթացներով[1]:

**Ձիգնունը Ֆրոյդի** փիլիսոփայանտրոպոլոգիական ուսմունքում իդենտիֆիկացիան դիտվում է որպես այլ մարդկանց հետ ունեցած հարաբերություններում էմոցիոնալ կապի ամենավաղ դրսևորում: Յուրաքանչյուր երեխա ցանկանում է սմանվել իր ծնողներին, կրկնել նրանց վարքն ու բարքը: Հենց սիրելի և հարազատ մարդու հետ իդենտիֆիկացիայի գործընթացի շնորհիվ ձևավորվում է սեփական ես-ը՝ էտալոնային /չափանմուշային/ մարդու օրինակով: Ֆրոյդը նշում էր, որ իդենտիֆիկացիան կարող է լինել ամբիվալենտ /երկարժեք/, այսինքն՝ երկակի իր բնությամբ:

Ղասական հոգեվերլուծության մեջ իդենտիֆիկացիան դիտվում է որպես մոր, հոր և ընտանիքի այլ անդամների հետ հուզական և էմոցիոնալ կապ: Երեխան իդեալականացնում է ծնողների կերպարը և ցանկանում սմանվել նրանց: Ծնողիկի հենց այս մեխանիզմին իրականանում է երեխայի սոցիալականացումը և սեփական ես-ի ձևավորումը՝ այլ անհատների լեկալներով կամ չափորոշիչներով:

Նույնականացման գործընթացի էությունն ու նշանակությունը ընդգծվել է մի շարք հայտնի պերսոնոլոգների կողմից: Այս առումով ուշագրավ է նեոֆրոյդիստ Է. Ֆրոմմի տեսակետը: **Էրիխ Ֆրոմմի** կարծիքով՝ մարդու ամենակարևոր պահանջմունքներից է նույնացման պահանջմունքը, պաշտամունքի առարկայի որոնումը: Աշխարհում, որտեղ առեղծվածային իրադարձություններ են կատարվում, մարդը կարող է իրեն միայնակ և լքված զգալ և ընդունակ չէ ինքնուրույն գիտակցելու շրջապատող կյանքի իմաստն ու նպատակները: Ինքնագիտակցման և ինքնակողմնորոշման ամբիվալենտության պատճառով «ձիշտ» իդենտիֆիկացիայի (երբ մարդն ինքն իրեն ասոցացնում /զուգորդական կապ/ է իր համար խորթ հայացքներին կամ նպատակների հետ) առջև ծագում են որոշակի խնդիրներ, որոնցից է անհատի ձիշտ նույնացումը իր սոցիալական, մշակութային, հոգեբանական կամ այլ պատկանելության հետ[2]:

\* Հոդվածն ընդունվել է 09.11. 2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել հ.գ.թ., դոցենտ Լ.Ղարախանյան:

Սոցալականացման գործնթացում անձն իրեն նույնացնում է ոչ միայն կոնկրետ դերերի հետ, այլև մի հատուկ տեսակի անհատականացված կամ պերսոնալիզացված պատկերացումների, որոնք համահունչ են նրա անհատական կողմնորոշումներին: Դրանք կարող են լինել իրական պատմական անձինք, գրական հերոսներ, «պայմանական» սոցիալ-հոգեբանական կամ պատմամշակույթային բնույթի տեսակներ (տիպաժներ) «ռոմանտիկ», «հզոր անձնավորություն», «գործարար» և այլն[3]:

Մարդու հոգեկանը մշտապես սերմանում է հումանիզացման գործընթաց: Էրիխ ֆրոմմը մեծ ուշադրություն դարձրեց «Միկի Մաուս» մուլտիպլիկացիոն շարքին, և, ինչպես Ադորնոն, ուզում էր հասկանալ մկնիկի դիմապատկերի հանրաճանաչության էֆեկտը: Ամերիկացի հետազոտողը փորձեց ձևակերպել իր հայեցակարգը և պարզել այդ հեռուստաշոուի ու նրա հերոսի ազդեցությունը մարդու հոգեկանի վրա: Այս առումով կարևորվում է նաև մեդիա միջավայրի դերը: Երեխաները կրկնում են այն, ինչ տեսնում են էկրաններին: Դա հետևանք է նույնականացման: Նույնականացնելով իրենք իրենց մի «հերոսի» հետ, որին երբեք չեն պատժում և նույնիսկ չեն նախատում երեխաները ընդօրինակում են և յուրացնում են նրա վարքի ագրեսիվ մոդելները:

Մեր օրերում սուր հնչեղություն է ստացել հեռուստատեսային բնության հիմնախնդիրը: Իրականում բոլոր ժամանակակից սերիալներում, ֆիլմերում և նույնիսկ մուլտֆիլմերում բնությունն առկա է: «Հեռուստատեսային բնություն» եզրույթը վաղուց օգտագործվում է գիտական բառապաշարում և միավորում է իր մեջ հեռուստատեսային հաղորդումների կամ ֆիլմերի հերոսներին վնասելու կամ վնասվածքներ ստանալը: Տեսաբաններն ապացուցել են, որ հեռուստաբնությունը կարող է վերածվել կարճաժամկետ գրգռման՝ այսպես կոչված «մոդելավորման էֆեկտի»:

Մատուցվող նյութերը՝ մուլտֆիլմերի թե ֆիլմերի տեսքով, իրականացնում են համոզմունքների ու դիրքորոշումների յուրօրինակ էսկալացիա, որի նպատակը թշնամանքի սերմանումն ու դրա թուլացումը թույլ չտալն է: Այս ամենը հանգեցնում է մարդկային էության ծայրահեղ վարկաբեկմանը. մի բան, որի արդյունքում սեփական դիմագիծը կարող է գծագրվել դրական գունավորումներով՝ հիմքում ունենալով հակառակ պատկերը:

ԶՏՄ-ները նաև ստոր, չարորակ ինֆորմացիայի աղբյուր են: Հեռուստատեսությամբ հեռարձակվում են բազմաթիվ էրոտիկ ֆիլմեր, որոնք այլասերում են ժամանակակից երիտասարդությանը, աղավաղում նրանց արժեհամակարգը՝ տանելով դեպի բարոյականության դեգրադացում: Վտանգավորն այն է, որ այդ ստորությանը, ճղիճմությանը հանդիպում ենք ոչ միայն հեռուստատեսությամբ, այլև թերթերում, ամսագրերում, համացանցում, ամենուր: Եվ մատուցվող նյութերում արտահայտված ագրեսիայի, նույնականացման, ատրիբուցիայի, կառույցային ատրիբուցիայի, ռացիոնալիզացիայի ինտելեկտուալիզացիայի, հակառակ ռեակցիայի ձևավորման մեխանիզմները, անշուշտ, բեկվում են մարդու պաշտպանական համակարգի միջով: Ավելին՝ հեռուստատեսությունն այսօր, ըստ էության, ճանաչողության ռացիոնալ ձև է և կատեգորիզացիայի առավել համապարփակ գործընթացի մասնավոր դրսևորում[4], որի ընթացքում անխուսափելի է հոգեբանական նույնացման գործընթացը: Ի դեպ, վերջինս կարող է տեղի ունենալ նաև օբյեկտիվորեն՝ առանց վերագրվող հատկանիշների կամ որակումների անհրաժեշտության:

Ալբերտ Բանդուրան դեռևս 1970 թվականին էր նկատել, որ հեռուստատեսային մոդելը կարող է դառնալ միլիոնավոր մարդկանց ընդօրինակման առարկա[5]: Հեռուստատեսության մատուցած գերակա արժեքային կողմնորոշումների ձևավորմամբ տեղի է ունենում երեխայի սոցիալական աշխարհի նվաճման գործընթացը:

Այստեղ հարկ է նշել «սոցիալական հետաքրքրություն» հասկացության ձևավորման մասին /Լ. Գ.Իոնին/ [6], որն սկզբնավորվում, ապա գիտակցվում է: Այսպիսի հետաքրքրության դոկտորինալ /հայեցակարգային/ ձևավորման գործում նաև հզոր ներգործություն ունի հեռուստատեսությունը: Այն էապես նպաստում է հեռուստադիտողի ինքնագիտակցության ձևավորմանը: Այս պարագայում նորից պետք է ընդգծել նույնականացման դերակատարությունը առողջ ինքնագնահատականի ձևավորման ու բարձրացման հարցում:

Իդենտիֆիկացիան սերտորեն կապված է անհատականացման կամ պերսոնալիզացիայի երևույթի հետ: Այդպես է կոչվում սեփական ես-ի գիտակցման գործընթացը, սոցիալականացման ընթացքում: Ինչո՞ւ են մեծահասակ հեռուստադիտողները ինֆանտիլության հասնող հետաքրքրությամբ՝ մանկան անմիջականությամբ դիտում այդ մուլտֆիլմները: Այդ ցիկլի անընդհատ շարունակման պահանջմունքը կարելի է բացատրել այսպես. «շարքային», սովորական անհատը, բախվելով կյանքի խիստ իրականությանը և հոգեկան անընդմեջ լարվածություն ապրելով, մասսայական մշակույթային իլլուստրացիաներում փնտրում է սեփական մոտիվների իրականացումը: Սեփական փորձության զգացումից մարդը ձգտում է լճանալու Միկիի պատկերի մեջ, թեկուզև միայն երևակայության մեջ զգալ իրեն ուրախ և երջանիկ, դրա հետ մեկտեղ նա «վրեժխնդիր է լինում» այն մարդկանցից, ում նախանձում կամ հաջողակ է համատերին: Հոգեվերլուծությամբ զբաղվողները վաղուց են անդրադարձ կատարել այս փաստերին: Նրանք նշել են, որ մարդու վարքագիծը հիմնականում պայմանավորված է նրանով, թե ինչպես է անձը գնահատում իր սոցիալական դերը: Պարզվել է, որ միջին դասի շատ ներկայացուցիչներ հակված են իրենց վերագրել ավելի բաժր կամ հարուստ մակարդակ, հետևաբար ունենալ մտքերի ու գործողությունների այլ չափանիշներ: Այլ կերպ ասած՝ մարդու վարքը կարգավորվում է ոչ միայն հատուկ սոցիալական դերերով, այլ նաև նրանով, թե ինչպես է ինքն իրեն «նույնացնում կամ կողմնորոշում»:

Արժե հիշատակել նաև ամերիկյան հոգեբան Էրիկ Էրիկսոնի «ինքնության ձգնաժամ» հասկացությունը, որը նա դիտել է կյանքի կարևորագույն հոգեւոցիալական փուլերից մեկը: Ամեն մարդ գնում է զարգացման իր ճանապարհով, վերապրում իր ներքին հակասություններն ու ձգնաժամերը և փորձում գտնել դրանց լուծումները: Էրիկսոնը կարծում էր, որ ինքնության ձգնաժամը կարելի է դիտել գեղարվեստական ստեղծագործություններն ուսումնասիրելիս և «մեծ» մարդկանց օրիգինալ գործերում, որոնք կարողացան իրենց համար լուծել այդ խնդիրը: Էրիկսոնը մտցնում է ևս մի կարևոր հասկացություն՝ հոգեբանական մորատորիում, ինչը նշանակում է հետաձգում: Սա հակված են անելու այն մարդիկ, ովքեր պատրաստ չեն ստանձնել պատասխանատվություն կամ փորձում են ժամանակ շահել ու հետաձգել հատուկ կյանքին պատրաստվելու գործընթացը[7]: Հոգեւոցիալական մորատորիումի ենթատեքստում Էրիկսոնը հասկանում է «մեծերի» պարտականությունները իր վրա ստանձնման ձգձգումը: Յուրաքանչյուր մշակույթ և հասարակություն իր երիտասարդ քաղաքացիների համար սահմանում է որոշակի մորատորիում:

Էկզիստենցիալ հոգեվերլուծության շրջականներում հայտնվեց մի նոր հասկացություն, որի ձևակերպումը բացահայտեց իդենտիֆիկացիայի սահմաններ: Խոսքն այն գործընթացների մասին է, որոնք ուղղված են «ես»-ի և շրջակա աշխարհի միջև նոր կապերի ձևավորմանն ու կորցրածի փոխարեն նոր հոգեկան փորձի ձեռքբերմանը: «Բանաձևում» տերմինը վերցված է Սուսաննա Լանգերի «Փիլիսոփայությունը նոր բանալիում» աշխատությունից: Ձևակերպումը ենթադրում է, որ արտակարգ իրավիճակներում ինքնությունը ոչնչացվում է: Այդ փորձը վերապրողն ստիպված է լինում

կամ նույնացվելու տուժողին կամ «խորհրդանշական վերածնունդ ապրելու»: Այնպիսի փիլիսոփայական անտրոպոլոգներ, ինչպիսիք են՝ Բ. Բատելխահնը, Ռ. Լիֆտոնը, Վ. Ֆրանկը, ուսումնասիրել են համակենտրոնացման ճամբարի մարդկանց և Ճապոնիայի ատոմային ռմբակոծությունից տուժածների վարքագիծը:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գոյատևման ձևերի բազմազանությունն ուղղված է երեք նպատակներին հասնելուն: 1/օրգանական կապի զգացումը այլ մարդկանց և աշխարհի հետ մեկտեղ, 2/ես-ի ամբողջականության ձեռքբերումը և գոյության իմաստի գտնումը, 3/տարածության մեջ տեղաշարժի զգացմունքի ձեռքբերում:

Երեխաների առողջ ինքնանույնացումը առողջ խորհրդանիշերին ու արժեքներին և վերջինիս հետ ինտեգրումը պետք է դառնա դաստիարակություն իրականացնող բոլոր կառույցների գլխավոր խնդիրը: Պետք է ասել, որ ինքնագիտակցության վերականգնումների շրջանները տարիքային հոգեբանության մեջ բնութագրվում են որպես զարգացման ճգնաժամեր, քանի որ սեփական ես-ի որոնումները հաճախ բավական բուռն ընթացք են ստանում, ուղեկցվում տազնապնդումով, կասկածներով, անվստահությամբ, ինքնափորձարկումներով: Միջին օղակը /դեռահասության շրջան/ այն շրջանն է, երբ դպրոցական ավելի շատ է ռեֆլեքսիայի, ինքնավերլուծության ենթարկում ինքն իրեն՝ մտահոգված «Ո՞վ եմ ես» հարցի պատասխանի ճիշտ որոնմամբ: Եթե կրտսեր տարիքում ինքնագիտակցության ձևավորման մեխանիզմ ենթ դիտում ազգային խորհրդանիշերի ակտիվ գործածությունը, ապա դեռահասության տարիքում պետք է ամեն ինչ անել լիարժեք ինքնանույնացում /իդենտիֆիկացիա/ ապահովելու համար: Այստեղ, անշուշտ, գործում է հետադարձ ազդեցության մեխանիզմը:

Երեխան իրեն նույնացնում է այս կամ այն հերոսի հետ, դնում իրեն այս կամ այն իրավիճակում, և իր նպատակները չեն կարող չբխեցվել դրանցից: Հետևապես հեռուստատեսությունը պետք է առաջադրի միանգամայն դրական ազդեցիկ կողմնորոշիչներ:

Կոմպետենցիաների /իրազեկությունների/ համակարգը, որի մեջ առկա էին գիտելիքի, հմտության ու դիրքորոշման բաղադրամասերը, նախկինում բացարձակորեն ուղղված էին իշխող գաղափարախոսությանը ծառայելուն: Լենինը քարոզվում էր երեխայի հոգեբանական նույնացման տարիքային բոլոր աստիճաններում /նախադպրոցական տարիքից սկսած/:

Հեռուստատեսության մատուցած գաղափարները փոխանցվում են երիտասարդ հեռուստադիտողին անկազմակերպ կերպով, որը չի կարող լիարժեք ձևով ծառայել իր նպատակին: Պետք է մշակվեն կոնկրետ միջոցառումներ առողջ մշակութային փոխանցման /տրանսֆեր/ հոգեբանական կողմն ապահովելու համար:

Պետք է ասել, որ Արցախյան շարժումը նպաստեց ազգային ինքնության, նրա բաղադրամասը կազմող արժեհամակարգի հոգեբանական նույնացման ամրապնդմանը: Բայց մենք պետք է կարողանանք պահպանել խորհրդային ինքնությունից առաջին անգամ դեպի ազգային ինքնության անցման իրողությունը: Դա կարող է ճիշտ ու գրագետ կազմակերպվել հոգեբանական նույնականացման ճիշտ օբյեկտների ընտրության ու ազդեցությունների գրագետ քաղաքականության կազմակերպման արդյունքում: Մենք ունենք հոգեբանական նույնականացման օբյեկտների պրոյեկցիաների արդիականացման խնդիր, ինչը կնպաստի սոցիալականացման գործընթացի լիարժեք կազմակերպմանը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. www.topos.ru.
2. Гуревич П.С., Вопросы социальной теории. Научный альманах. Том IV. М., 2010, стр.15
3. Там же, стр.20
4. Стефаненко Т. Г. Этнопсихология, М., 2007, стр.287
5. Психология самосознания. Самара, Издательский дом “ Бахрах-М”, 2003, стр.59
6. Там же, стр.658
7. Гуревич П.С., указ. работа, стр.27
8. Самохвалова В.И., К пониманию человека в его человеческой идентичности// Полигнозис. 2009. № 2. стр. 89.
9. Шибутани Т. Социальная психология, М., Ростов-на-Дону “Феникс” 1999, стр. 528.
10. Шульц Д., Сибни Е., История современной психологии, Евразия, С. П-бург 1987, стр.528.

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### Հոգեբանական նույնացումը սոցիալականացման առանցքի Ռոզալյա Հարությունյան

Հոդվածում ներկայացված է հոգեբանության արդի խնդիրներից մեկի՝ հոգեբանական իդենտիֆիկացիայի՝ որպես սոցիալականացման առանցքի մասին տեսակետը: Այն ամփոփում է հոգեբանական գիտության խնդրո առարկայի մասին գիտական հանրույթում գոյություն ունեցող հայտնի պերսոնոլոգների տեսակետները, որոնք ներկայացվել են դիտարկելով սոցիալականացման համատեքստում: Շեշտվում է նաև ՋՏՄ--ների նեգատիվ ազդեցությունը «ճիշտ» իդենտիֆիկացիայի ձևավորման վրա, որը սոցիալականացման կարևոր ատրիբուտ է: Ազգային ինքնության և արժեհամակարգի հոգեբանական նույնացման ամրապնդմանը խթան հանդիսացավ Արցախյան շարժումը, որը ազգային գիտակցության հեղաշրջում կատարեց:

## РЕЗЮМЕ

### Психологическая идентификация как ось социализации Розалия Арутюнян

**Ключевые слова:** идентификация, социализация, СМИ, персонализация, психологический мораториум, культурная передача

В статье представлена точка зрения касательно одной из проблем психологии сегодня, а именно: психологической идентификации как оси социализации. Она резюмирует существующие в научном сообществе позиции выдающихся персонологов относительно объекта исследования, которые были представлены в контексте социализации. Подчеркивается также отрицательное влияние СМИ на формирование «правильной» идентификации, которая является важным атрибутом социализации. Стимулом укрепления психологической идентификации системы ценностей и национальной идентичности стало Арцахское движение, совершив революцию в национальном сознании.

**SUMMARY**

**The Psychological Identification as the Axle of Socialization**

**Rozalia Harutyunyan**

**Keywords:** *identification, socialization, mass media, personalization, psychological moratorium, cultural transmission.*

The article presents the point of view on one of the contemporary issues in psychology, particularly the psychological identification as the axle of socialization. It sums up all the positions of outstanding personologists existing in scientific society regarding the object of the investigation which were presented in the context of socialization. The negative influence of mass media on the formation of the «right» identification is emphasized, which appears to be an important attribute of socialization. The Artsakh movement became the stimulus to reinforcement of priority's psychological identification and national identity, having made a revolution in national consciousness.